

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱԿԻՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԼԱԴԻԿԻ

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 1991-2013
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հայրունի Ա. Ն.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Մինասյան Է. Գ.

պատմական գիտությունների
թեկնածու, Պետրոսյան Բ. Ռ.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 27-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը: Դեռևս վաղ միջնադարից հայերը հաստատվում էին այժմյան Գերմանիայի տարածքներում, իսկ 19-րդ դարից սկսեցին ստեղծել համախմբող կառույցներ և միություններ: Միջազգային տարբեր իրադարձությունների պատճառով 20-րդ դարում հայերի հույժը դեպի Գերմանիա ավելացավ, և ստեղծվեցին առաջին հայկական համայնքները: Ժամանակի ընթացքում այդ համայնքները և կառույցները հստակեցրին իրենց գործունեության շրջանակը՝ առաջնահերթ խնդիր ունենալով պահպանել ազգային դիմագիծը:

1980-ական թթ. վերջը շրջադարձային եղավ ինչպես ամբողջ հայկական սփյուռքի, այնպես էլ գերմանահայերի համար. դյուրացավ հայրենիք-սփյուռք փոխայցելությունների ընթացակարգը: Դրան նպաստեցին նաև Սպիտակի ավերիչ երկրաշարժը, հայ-ադրբեջանական հակամարտությունը և Հայաստանի անկախացումը: Գերմանիայի հայերը, ինչպես հայկական սփյուռքը, սկսեցին ֆինանսական և հումանիտար աջակցություն ցուցաբերել հայրենիքին:

Վերոնշյալ գործընթացների պատճառով արտագաղթը Հայաստանից մեծ ծավալների հասավ և, որպես ֆինանսապես ապահով և զարգացած պետություն, Գերմանիան նույնպես հայտնվեց գաղթելու համար նախընտրելի այդ երկրների ցանկում:

1990-ական թթ. սկսած հայկական սփյուռքում, այդ թվում նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) հայկական համայնքում, սկսվեց համալրումների մի նոր փուլ:

Թեման խիստ արդիական է, քանի որ այն խորը և համակողմանի ուսումնասիրված չէ. հետազոտությունների մեծ մասը նվիրված է մի որևէ առանձին խնդրի և չի ընդգրկում բոլոր հիմնահարցերը: Աշխատանքում ամբողջական ուսումնասիրության է ենթարկվել Գերմանիայի հայ համայնքը 1991-2013 թթ.՝ նորովի ներկայացնելով նաև մինչ այդ կատարված ուսումնասիրություններում տեղ գտած որոշ դրույթներ:

Գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աշխատանքը առաջին գիտական փորձն է՝ ամբողջական ուսումնասիրության ենթարկելու Գերմանիայի հայ համայնքը 1991-2013 թթ.:

Բացի վերոնշյալից՝ ատենախոսության մեջ քննության են առնվել հետևյալ հիմնահարցերը.

- Նախ տրվում է 1991-2015 թթ. ԳԴՀ ներգաղթած ՀՀ քաղաքացիների քանակը՝ ըստ տարիքային և սոցիալական խմբերի:
- Աշխատանքում համեմատական վերլուծության են ենթարկվել 1990-ական թթ. և 2000-ական թթ. գաղթած հայերի առջև ծառայած խնդիրներն ու խոչընդոտները համայնքին ինտեգրվելու առումով, և թե ինչպիսին է հայապահպանության գործը նրանց շրջանում:

- Ներկայացվել են առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն Գերմանիայի հայ համայնքին:
- Ուսումնասիրվել են համայնքում գործող հայանպաստ կառույցները և դրանց դերը համայնքային կյանքում:
- Ներկայացվել են հայկական համայնքի համագործակցության ոլորտները Գերմանիայում գործող այլ ազգային համայնքների միությունների և կառույցների հետ:
- Աշխատանքում շրջանառության մեջ են դրվում այդ ժամանակաշրջանի պատմական փուլին վերաբերող արխիվային նոր նյութեր և համայնքային գործիչների անձնական փաստաթղթեր:
- Առաջին անգամ համակողմանիորեն քննարկվում են Գերմանիայի հայ համայնքի արդի փուլը և զարգացման հեռանկարները:
- Հետազոտության մեջ քննվել են հայ համայնքին վերաբերող հիմնախնդիրները Գերմանիայի ներքին զարգացումների համատեքստում և այն արտաքին մարտահրավերներն ու համայնքին վերաբերող խնդիրները, որոնք նպաստեցին Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն ներկայացնել 1991-2013 թթ. Գերմանիայի հայ համայնքը: Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Կարճ ակնարկով ներկայացնել հայերի հետքը գերմանական հողում և լուսաբանել ԳԴՀ հայկական համայնքի ձևավորումը և իրավիճակը արդի փուլում:
- Ուսումնասիրել Գերմանիայում հանդես եկող հայկական և հայ-գերմանական համատեղ կազմակերպությունների ու միությունների գործունեությունը, որոնք հանդես են գալիս լոբբիստական, գիտահետազոտական, կրոնական, մշակութային և մասնագիտական կառույցների տեսքով:
- Հետազոտել հայ համայնքի դերը ԳԴՀ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում: Ներկայացնել դրա շարժառիթները, հանգուցալուծումը և հետագա զարգացումները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատանքի մեջ առաջ քաշվող հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Գերմանիայի հայ համայնքին, ինչպես նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանին առնչվող հետազոտություններում և դասախոսություններում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև համայնքային կյանքին առնչվող ուսումնասիրություններ և վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև համայնքի նկատմամբ մոտեցումների ճշգրտման առումով:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը շարադրված է սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, գիտական հոդվածների, մենագրությունների, մամուլի, վիճակագրական նյութերի վերլուծական-համադրական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ: Առաջին մեթոդի շնորհիվ աշխատանքում կատարվել են վերոնշյալ թեմային առնչվող աղբյուրների և վերլուծական նյութերի համաբերում, համակարգում, ընդհանրացում, վերլուծություն և ամփոփում: Այդ ամենը հնարավորություն է տվել ատենախոսության մեջ քննարկված խնդիրները դիտարկել մեկ ամբողջական համակարգում: Պատմահամեմատական մեթոդի և դրա պատմաձագումնաբանական ու պատմատիպաբանական ուղղությունների օգտագործման շնորհիվ հնարավոր է դարձել բացահայտել և ներկայացնել գերմանահայ համայնքի ծագման և զարգացման իրողությունները, ինչպես նաև առկա կառուցվածքն ու գործունեության բնույթը:

Հետազոտության ժամանակագրական և տարածքային շրջանակը: Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1991-2013 թթ.: Հայկական սփյուռքի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների մի մասը գտնում է, որ այն համարվում է ինչպես հայրենիք-սփյուռք հարաբերությունների, այնպես էլ հայկական սփյուռքի ներքին զարգացումների և համայրումների փուլ: 1991 թ. սկսած՝ գերմանահայ համայնքն ավելի կայուն կապեր հաստատեց հայրենիքի հետ, ինչը երկու կողմերի համար էլ շահեկան էր: Այդ ժամանակահատվածում սկսվեց հայերի հոսքը դեպի Գերմանիա, ինչի արդյունքում համայնքային կյանքի տարբեր ոլորտներում ներգրավվեցին համայնքային կյանքով երբեք չսպարած հայեր, ինչն էլ առաջացրեց նոր զարգացումներ գործող համայնքում: Հետազոտության ժամանակագրությունը ավարտվում է 2013 թ., ինչը լիովին բավարարում է գերմանահայ համայնքի հետազոտության առաջին փուլը հետխորհրդային ժամանակաշրջանում եզրափակելու համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության են ներկայացրել ԵՊՀ Սփյուռքագիտության և Հայոց պատմության ամբիոնները: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրատարակած երեք հոդվածներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը: Ատենախոսության ուսումնասիրությունը վերաբերում է 1991-2013 թթ. Գերմանիայի հայ համայնքին, սակայն այդ շրջանն ավելի լավ հասկանալու համար անդրադարձ է կատարվել համայնքի կազմավորմանը և զարգացմանը մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այդ

Ժամանակաշրջանին անդրադարձել են էննո Մեյերը և Արա Բերկյանը¹: Նրանց աշխատության մեջ խոսվում է հայերի ու գերմանացիների դարավոր հարաբերությունների ու Գերմանիայում առաջին հայերի հաստատվելու մասին: Նմանատիպ աշխատություն է գրել նաև Ազատ Օրդուխանյանը², որտեղ ներկայացնում է ազգությամբ հայ հոգևոր և քաղաքական գործիչների դերը Գերմանիայի պատմության մեջ:

Ընդգրկվել են նաև գերմանահայ համայնքի տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող աշխատություններ, որոնցում ներկայացված է ինչպես համայնքի, այնպես էլ համայնքային անհատ գործիչների ու կառույցների գործունեությունը³: Նմանատիպ աշխատություններից է Հենրիկ Բախչինյանի գիրքը Արտաշես Աբեղյանի մասին, որտեղ նկարագրվում է նաև համայնքում նրա հասարակական-քաղաքական գործունեությունը⁴:

Հայկական համայնքի և գերմանացի գործիչների համատեղ գործունեության մասին լուսաբանվում է նաև Աշոտ Հայրունու «Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը» գրքում⁵:

Հայրենական պատերազմի տարիների գերմանահայ համայնքի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Կարո Գէորգեանն իր «Ամէնուն տարեգիրքը» աշխատության մեջ⁶: Այդ շրջանին անդրադարձել են նաև Միսաք Թորլաքեանը՝ «Օրերուս հետ»⁷ աշխատանքում և այլ հեղինակներ⁸:

«Գերմանա-հայկական ընկերությունը» բավականին նյութեր է հրատարակել հայ համայնքի գործունեության վերաբերյալ: Դրանցից

¹ St' u Meyer E., Berkian J. A., Zwischen Rhein und Arax. Neunhundert Jahre deutsch-armenische Beziehungen, Oldenburg, 1988.

² St' u Ordukhanyan A., Armenier in Deutschland. Geschichte und Gegenwart, in: Der Ausländerbeauftragte, Beim Thüringer Ministerium für Soziales (Hrsg.): Gelbe Reihe, Erfurt, 2008.

³ St' u Tauber A., Armenier in Hamburg. Ethnographie einer Gemeinde in der Diaspora, Hamburg, 1999. St' u նաև Topakian G., Armenischer Hochhandel in Bayern, Zeitschrift für armenische Philologie, Wien, 1988. St' u Libaridian G. J., Entwicklung und Struktur der armenischen Diaspora, in: Dabag M., Platt K. Hrsg. Identität in der Fremde, Bochum, 1993. St' u Schaeffgen A., Schwieriges Erinnern. Der Völkermord an den Aremniern, Berlin, 2006. St' u Röseler P., Die Geschichte der Deutsch-Armenischen Gessellschaft, Deutsch-Armenische Gessellschaft, Mainz, 1989.

⁴ St' u Բախչինյան Հ., Արտաշես Աբեղյան (Գյոթե, Թատերգություններ, թարգմանությունը եւ ծանոթագրությունները Արտաշես Աբեղյանի), Երևան, 1995:

⁵ St' u Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002:

⁶ St' u Գէորգեան Կ., Ամէնուն տարեգիրքը, 1954, Ա. տարի:

⁷ St' u Թորլաքեան Մ., Օրերուս հետ, Պէյրուս, 2001:

⁸ St' u Zadoian H. Our Brothers' Keepers: The American National Committee to Aid Homeless Armenians (ANCHA), New York, 2012. St' u Абрамян Э. А., Забытый легион: Неизвестные страницы соединения специального назначения 'Бергманн, Ереван, 2002.

հատկանշական է ընկերության հարյուրամյակին նվիրված գիրքը, որտեղ ներկայացվում է «Գերմանա-հայկական ընկերության» պատմությունը և անդրադարձ կատարվում Գերմանիայում գործունեություն ծավալող տարբեր հայկական կազմակերպությունների⁹:

Աշխատության մեջ փորձել ենք տալ «սփյուռք» երևույթի նկարագրությունն ու սահմանումը՝ համեմատականներ անցկացնելով Գերմանիայի հայ համայնքի հետ: Դրա համար օգտագործել ենք անգլիացի սոցիոլոգ Ռոբին Կոհենի «Գլոբալ սփյուռքներ. ներածություն» աշխատությունը¹⁰, որտեղ հեղինակը տալիս է «սփյուռքի» սահմանումը և սփյուռքի տարրերի դասակարգումը:

Օգտագործել ենք նաև հրեա քաղաքագետ Գեբրիել Շեֆֆերի աշխատությունը, որտեղ ներկայացվում են սփյուռքների առաջացման հիմնական պատճառները¹¹: Այդ առումով Դոմինիկ Շնափերի աշխատությունը ևս մեծ արժեք է ներկայացնում և տեղ է գտել ատենախոսությունում¹²:

Աշխատանքում քննարկել ենք նաև Ուիլյամ Սաֆրանի գիրքը, որտեղ նա ներկայացնում է այն հիմնական հատկանիշները, որոնցով բնորոշվում է սփյուռքը¹³: Նմանատիպ աշխատանք ունի նաև ամերիկացի պատմաբան Կիմ Բատլերը, որտեղ նա տալիս է սփյուռքի սահմանումը՝ բոլոր առանձնահատկություններով հանդերձ¹⁴:

Հետազոտության մի շարք հարցեր լուսաբանելու համար օգտագործել ենք Խաչիկ Թոլոյանի աշխատությունը, որտեղ հեղինակը, հաշվի առնելով հայկական սփյուռքի առանձնահատկությունները, այն բաժանել է 4 տեսակի¹⁵: Մեր աշխատանքում զարգացրել ենք Թոլոյանի նշած տեսակետը և փորձել ենք այն ներկայացնել գերմանահայ արդի համայնքի համատեքստում:

Գերմանիայում ապրող ՀՀ քաղաքացիների թիվը և նրանց՝ այնտեղ գտնվելու պատճառների վերլուծությունը հնարավոր եղավ իրականացնել Վիսբադենում գործող Գերմանիայի պետական վիճակագրական կենտրոնի տրամադրած տվյալների շնորհիվ¹⁶: Ատենախոսությունում տրվում է նաև

⁹ St'u Deutsch-Armenische Gesellschaft, 100 Jahre Deutsch-Armenische Gesellschaft: Erinnern. Gedenken. Gestalten, Hannover, 2014.

¹⁰ St'u Cohen R., Global Diasporas: An Introduction, London, 1997.

¹¹ St'u Sheffer G., Diaspora Politics: At Home Abroad, New York, 2003.

¹² St'u Schnapper D., From the Nation-State to the Transnational World: On the Meaning and Usefulness of Diaspora as a Concept, Diaspora 8, № 3, 1999.

¹³ St'u Safran W., Diasporas in Modern Societies: Myth of Homeland and Return, Diaspora 1, № 1, 1991,

¹⁴ St'u Butler K., Defining Diaspora, Refining a Discourse, Diaspora 10, № 2, 2001.

¹⁵ St'u Tölölyan Kh., Traditionelle Identität und politischer Radikalismus in der armenischen Diaspora, in: Dabag M. Platt K. (Hrsg.): Identität in der Fremde, Bochum, 1993.

¹⁶ St'u Statistisches Bundesamt, Bevölkerung und Erwerbstätigkeit Ausländische Bevölkerung Ergebnisse des Ausländerzentralregisters, Wiesbaden, 2016.

Հայաստանից տարբեր տարիների արտագաղթածների վիճակագրությունը, որը կատարել են տարբեր կազմակերպություններ¹⁷:

Անշուշտ, մեր հետազոտության մեջ հիմնական շեշտը դրել ենք այն հետազոտությունների վրա, որոնք առնչվում են գերմանահայ համայնքին ու նրա գործունեությանը: Այդ հարցով բացառիկ է Մառայկե Դոյսեի հետազոտությունը¹⁸, որտեղ նա գրում է գերմանահայ համայնքի կայացման, հայրենիքի հետ կապի, առանձնահատկությունների, համայնքում առկա բաժանումների և կապվածության մասին: Ներկայացվում է նաև գերմանահայ համայնքի այն ներուժը, որը կարելի է զարգացնել և ստանալ արդյունքներ ինչպես համայնքային, այնպես էլ հայրենիք-սփյուռք ու հայ-գերմանական հարաբերություններում:

Գերմանիայում գործող հայկական կազմակերպություններին անդրադարձել է Բոխումի Ռուիր համալսարանի շրջանավարտ Մարիա Զադոյանը, ով ներկայացրել է այդ կազմակերպությունների պատմությունը և գործունեությունը¹⁹: Հայկական կազմակերպությունների, մասնավորապես գիտահետազոտական կենտրոնների գործունեությանը անդրադարձել են «Մերոպ» հայագիտական կենտրոնի տնօրեն Արմենուհի Դրոստ-Աբգարյանը և Հերման Գուլը²⁰, Բեռլինի Ազատ համալսարանի դասախոս Ժիրայր Քոչարյանը²¹, պատմաբան Ազատ Օրդուխանյանը²², Բոխումի Ռուիր համալսարանի դասախոս Միհրան Դաբաղը²³ և այլ հեղինակներ:

¹⁷ Տե՛ս ՄԱԿ-ի Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան, Երևան, 1996: Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2001: Միգրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2009, էջ 39: Տե՛ս Gallup, Desire to Leave FSU Ranges Widely Across Countries, 04.04.2013.

¹⁸ Տե՛ս Dreusse M. Die armenische Diaspora in Deutschland. Ihr Beitrag zur Entwicklung Armeniens, In: Deutsche Gessellschaft für Technische Zusammenarbeit (GTZ) (Hrsg.): Migration und Entwicklung, Frankfurt am Main, 2008.

¹⁹ Տե՛ս Zadoyan M., Migration und Integration: Migrationorganisationen und gesellschaftliche Partizipation das Beispiel ausgewählter armenischer Vereine in Deutschland, Bochum, 2008.

²⁰ Տե՛ս Drost-Abgarjan A., Goltz H., Armenologie in Deutschland: Beiträge zum Ersten Deutschen Armenologen-Tag, Münster, 2005.

²¹ Տե՛ս Քոչարյան Ժ., Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները, Հայագիտությունը Գերմանիայում. անցյալը և ներկան, Երևան, 2004:

²² Տե՛ս Օրդուխանյան Ա., Գերմանիայի հայ ակադեմիականների միության տարեգիրք, Երևան, 2002:

²³ Տե՛ս Dabag M., Die armenische Minderheit, In: Schmalz-Jacobsen C. und Hansen G. (Hrsg): Ethnische Minderheiten in der Bundesrepublik Deutschland. Ein Lexikon, München, 1995.

Աշխատանքում տեղ են գտել նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվում պահվող նյութեր, որոնք վերաբերում են Գերմանիայի հայկական համայնքին²⁴:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ անհնար է դարձել չօգտագործել այն հնարավորությունները, որն ընձեռում է համացանցը: Խոսքը, նախ և առաջ, Գերմանիայում գործող հայկական ու հայամետ կազմակերպությունների համացանցային էջերի մասին է, որոնցից են «Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը»²⁵, «Գերմանա-հայկական ընկերությունը»²⁶, «Վտանգված ժողովուրդների ընկերությունը»²⁷, «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը²⁸, «Մեսրոպ» հայագիտական կենտրոնը²⁹, «Պոստդամում Լեփսիուսի տունը»³⁰ և համայնքային, մշակութային, գիտական և եկեղեցական կազմակերպությունների³¹ ու այլ պաշտոնական կայքեր³²:

Թեման հետազոտելիս օգտվել ենք հայերեն և օտարալեզու հոդվածներից ու գիտական գրականությունից: Հատկապես արժեքավոր են Կարլ Յոհան Բլինդայի և Քրիստոֆեր Բերգների գործերը, որոնք ներկայացնում են ցեղասպանության մասին բանաձևի ընդունման գործընթացը³³, ինչպես նաև

²⁴ Տե՛ս ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, գործ 16-16, էջ 125, 127, 128, 161, նաև գործ 19 VI, էջ 47, 48, 63-68, 134, 135, նաև գործ 9-11 էջ 28, 29, 70, 90, նաև գործ 12-18, էջ 38, 46-53, 103, 104, նաև գործ 13-13, էջ 7, 8, 31-34, 66, 67, 70, 102-119, նաև գործ 178-I, էջ 28, 56:

²⁵ Տե՛ս <http://www.zentralrat.org>.

²⁶ Տե՛ս <http://www.deutscharmenischesgesellschaft.de>.

²⁷ Տե՛ս <https://www.gfbv.de>.

²⁸ Տե՛ս <http://www.aga-online.org>.

²⁹ Տե՛ս <http://www.mesrop.uni-halle.de>.

³⁰ Տե՛ս <http://www.lepsiushaus-potsdam.de>.

³¹ Տե՛ս <http://www.armenierberlin.de/>, <https://armenischevangelischekirche.wordpress.com/>, <http://armenischegemeindekoeln.de/>, <http://www.silvakaputikian.de>, <http://armenier-frankfurt.de>, <http://haik.agbuyp.org/>, <http://armenischegemeindeneuwied.blogspot.am/>.

³² <http://www.mfa.am>, <http://www.wolfganggust.net/>.

³³ Blydal C. J., Bergner Ch. Versöhnung, Instrumentalisierung, Beleidigung. Der Armenierantrag im Jahre 2005 und die politische Willensbildung in Deutschland zum Völkermord an den Armeniern, Berlin, 2011,

Հերման Գոլցի³⁴, Վոլֆգանգ Գուստի³⁵, Օտտո Լուխտերհանթի³⁶ և այլոց աշխատանքները³⁷:

Գերմանիայի հայկական համայնքի համար կարևոր են նաև պրոֆեսոր Թեսսա Հոֆմանի աշխատությունը Բեռլինի հայկական համայնքի վերաբերյալ, ինչպես նաև նրա համատեղ հրատարակություններն այլ գիտնականների հետ³⁸: Մենք օգտվել ենք նաև Հոֆմանի անձնական արխիվից, որտեղ կան Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ներկայացնող բազմաթիվ փաստաթղթեր և նամակներ:

Մի շարք խնդիրներ համակողմանիորեն դիտարկելու համար Գերմանիայում իրականացրել ենք հարցազրույցներ համայնքային և համայնքի հետ առնչվող գործիչների և կառույցների հետ:

Գերմանիայի հայկական համայնքի մասին մեզ տեղեկություններ է հաղորդել «Գերմանա-հայկական ընկերության» կողմից հրատարակվող «Հայ-գերմանական թղթակցություն» պարբերականը, որը Րաֆֆի Քանոյանի խմբագրությամբ լույս է տեսնում մինչ օրս³⁹: Օգտագործել ենք նաև համայնքին և

³⁴ St'u Hermann G., Eröffnung des MESROP. Zentrum für Armenische Studien an der Stiftung Leucorea Zu Wittenberg am Sonntag, Dem 6. September 1998, Münster, 2005.

³⁵ St'u Gust W., Der Völkermord an den Armeniern 1915/16. Dokumnte aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, Springe, 2005.

³⁶ St'u Luchterhandt O., Das Recht Berg Karabaghs auf staatliche Unabhängigkeit aus völkerrechtlicher Sicht, in: Archiv des Völkerrechts (AVR), Nr. 31, Frankfurt am Main, 1993.

³⁷ St'u Գեոնեսան Թ., Ռ՛վ է հայ, «Յոյս», Թեհրան, 2010: St'u Aliye A. Hemşin Ermenileri. Tarihin ve Istanbul Istanbul Bugünün Aynasında, Istanbul, 2005. St'u Մոսկոֆեան Հ., Համընթաց ընտանիքի մը ողիսականը՝ Մայնի-Ֆրանքֆուրթի մէջ, Մասիս, Բեյրութ, հունիս, 2006: St'u Tölölyan, Kh., Traditionelle Identität und politischer Radikalismus in der armenischen Diaspora, in: Dabag, Mihran- Platt, Kristin (Hrsg.): Identität in der Fremde, Bochum, 1993. St'u Сумленны С., Армянская диаспора Германии: От непризнания к интеграции, «21-й БЕК», № 2 (4), Ереван, 2006. St'u Briskina-Müller A., Drost-Abgarjan A., Meißner A., Logos im Dialogos Auf der Suche nach der Orthodoxy. Gedenkschrift für Hermann Goltz, Berlin, 2011.

³⁸ St'u Hofmann T., Armenien und seine Diaspora. In: Der Beauftragte des Senats von Berlin für Integration und Migration: Armenier in Berlin – Berlin und Armenien, Berlin, 2005. St'u, Hofmann T., Koutcharian G., Armenien - Völkermord, Vertreibung, Exil; Menschenrechtsarbeit für die Armenier 1979-1987, Göttingen, 1987. St'u Hoffman T., Bezulgues S., Politische, juristische und menschenrechtliche Hintergründe und Auswirkungen des Bundestagsbeschlusses vom 16. Juni 2005. In: Orient. Deutsche Zeitschrift für Politik und Wirtschaft des Orients, Hamburg, 2006.

³⁹ Armenisch-Deutsche Korrespondenz , Jg. 1991, 1992, 1993, 1994, 1994, 1995, 1996, 1997, 1998, 1999, 2000, 2001, 2002, 2003, 20004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013.

հայկական հարցին վերաբերող գերմանական⁴⁰, հայկական⁴¹ մամուլը, Բունդեսթագի⁴² և լանդթագների (երկրամասային խորհրդարան)⁴³ տրամադրած փաստաթղթերը:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից. աշխատանքին կցված են օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության ցանկ ու հավելվածներ:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացված են հետազոտման մեթոդները և գիտական նորույթը, տրված է թեմային վերաբերող օգտագործված աղբյուրների և օգտագործված գրականության տեսությունը:

Առաջին գլուխը ներառում է ԳԴՀ հայկական համայնքի ձևավորումը և իրավիճակը արդի շրջանում: Այն իր հերթին բաժանվում է երկու ենթագլխի՝ ըստ ժամանակագրության և տեղի ունեցած իրադարձությունների:

Առաջին ենթագլխի ժամանակագրական սահմանները ընդգրկում են Գերմանիայում հայոց ներկայությունը վաղ միջնադարից մինչ 20-րդ դարի 80-ական թվականների վերջը: Առաջին ենթագլխի սկզբում ներկայացվում են հայկական ծագում ունեցող այն անհատներ և խմբեր, որոնք առաջինն են հաստատվել գերմանական տարածքներում և նշանակալի ավանդ են թողել գերմանական հոգևոր, քաղաքական և հասարակական կյանքում: Նյույթը հիմնականում քաղված է գերմանական աղբյուրներից: Այնուհետև լուսաբանվում է առաջին հայկական կառույցների, ուսանողական միությունների և համայնքների ստեղծման պատմությունը Գերմանիայում: Հատուկ ուշադրություն է դարձվում այն անհատներին, որոնք մեծ ավանդ են ունեցել հայկական համայնքի զարգացման ու կայացման գործում: Ներկայացվում են նաև գերմանա-հայկական առաջին համատեղ կազմակերպությունների ստեղծման պատմությունը և նշանակությունը երկու ժողովուրդների համար: Խոսվում է նաև 1920-1950 թթ. ընկած ժամանակահատվածում գերմանահայ համայնքի անցած ուղու և համայնքի

⁴⁰St'u Die Zeit, Der Tageszeitung (TAZ), Frankfurter Allgemeine Zeitung, Der Tagesspiegel, Focus Online, Süddeutsche Zeitung, Potsdamer Neueste Nachrichten, Die Frankfurter Rundschau,

⁴¹St'u «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր», «Ազգ», armenpress.am

⁴² Deutscher Bundestag, Drucksache 14/5778 vom 04. 04. 2001, Drucksache 15/4933 vom 22. 02. 2005, Drucksache 15/4933 vom 21.04.2005, Drucksache 15/5689 vom 15.06.2005, Drucksache 16/4949 vom 02.04.2007, Drucksache 16/5221 vom 04.05.2007, Drucksache 16/4750 vom 19.03.2007, Drucksache 16/4959 vom 03.04.2007, Drucksache 17/687 vom 10.02.2010, Drucksache 17/687 vom 25.02.2010, Drucksache 17/179 vom 19.05.2010.

⁴³ Bayerischer Landtag Drucksache 14/6281 vom 04.04.2001.

համար նշանակալի գործունեություն ծավալած անհատների մասին: Այնուհետև անդրադարձ է կատարվում հայկական համայնքի համալրումներին և դրանց նպաստող պատճառներին: Ներկայացվել են նաև այդ ժամանակաշրջանում համայնքում ի հայտ եկած խնդիրները, որոնց որոշ մասը ժամանակի ընթացքում ստացել է համապատասխան լուծումներ:

Երկրորդ ենթազվխի ժամանակագրական սահմանները ներառում են 1991 թ. սկսած մինչև ԳԴՀ հայկական համայնքի արդի փուլը: Ենթազվույնը սկսվում է «սփյուռք» հասկացության սահմանումների ներկայացմամբ, որը ուսումնասիրվել է տարբեր գիտնականների կողմից: Անդրադարձ է կատարվում նաև հայկական սփյուռքին վերաբերող ուսումնասիրություններին: Քննվում են հայկական սփյուռքի գերմանահայ համայնքների ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Ենթազվխում լուսաբանվում են նորանկախ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ներքին և արտաքին այն խնդիրները, որոնք պատճառ են դառնում հայկական սփյուռքի և գերմանահայ համայնքի նորագույն համալրումների: Ներկայացրել ենք նաև տվյալներ Գերմանիայի պետական վիճակագրական հաստատության՝ 1991-2015 թթ. Գերմանիայում տարբեր պատճառներով բնակվող ՀՀ քաղաքացիություն ունեցող անձանց թվաքանակի, կարգավիճակի և այլնի մասին: Վիճակագրությունը համակողմանի ներկայացվում է վերլուծություններով: Դրանից բացի՝ 2014-2017 թթ. Գերմանահայ համայնքում իրականացվել են հարցազրույցներ համայնքային և այլ կառույցների գործիչների հետ, որոնցից են ԳԴՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանը, ԳԴՀ-ում Արցախի մշտական ներկայացուցիչը, Բունդեսթագի պատգամավորներ և այլն: Նրանց տեսակետներն օգնել են ավելի լավ պատկերացնելու գերմանահայ համայնքի կյանքն ու հուզող խնդիրները:

Երկրորդ գլխում ներկայացվում են հայկական կազմակերպություններն ու միությունները ԳԴՀ-ում: Այն բաղկացած է երեք ենթազվխից, որոնցում քննվում է համայնքում գործող հայկական և հայանպաստ կազմակերպությունների գործունեությունը:

Առաջին ենթազվխում ներկայացվում է ԳԴՀ-ում հայկական և հայանպաստ լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը: Նախ խոսվում է Գերմանահայոց կենտրոնական խորհրդի (այսուհետ՝ ԳԿԽ) մասին: Ներկայացվում են ԳԿԽ-ի կառուցվածքը և նրա գործունեությունը ընդգրկող ոլորտները: Խոսվում է նաև ԳԿԽ-ին անդամակցող կազմակերպությունների և անդամների գործունեության, նրանց ներքին խնդիրների և հայկական լոբբին ԳԴՀ-ում կազմակերպելու գործում ունեցած դերի մասին: Նույն տեսանկյունից ներկայացվում է նաև «Հայկական հարցերի ինստիտուտը»-ը: Ենթազվխում անդրադարձ է կատարվում նաև այսպես կոչված խառնածին կազմակերպություններին, որոնցից է «Գերմանա-

հայկական ընկերություն»-ը: Ներկայացվում է նրա կառուցվածքը և գործունեությունը: Առանձին խոսվում է նաև «Հայ-գերմանական թղթակցություն» պարբերականի մասին: Այն մեծ դեր է կատարում հայկական համայնքում՝ լուսաբանելով հայկական սփյուռքում և տեղական համայնքներում տեղի ունեցող իրադարձությունները: Գնահատելի է նաև այն փաստը, որ թղթակցության յուրաքանչյուր նոր համար առաքվում է Բունդեսթագի պատգամավորներին և այլ կառույցների ներկայացուցիչներին: Ներկայացվում են նաև այն ոչ հայկական կազմակերպությունները և դրանցում գործող անհատները, որոնց նպատակը համընկնում է հայկական շահերի հետ. դրանցից է «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը, որը հիմնականում մարդու իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող կառույց է և շատ դեպքերում համագործակցում է հայկական համայնքի հետ Հայոց ցեղասպանության ճանաչման և այլ ոլորտներում: Ենթազխի վերջում ներկայացվում են վերոնշյալ կառույցների համագործակցության սերտացման հարցում առկա հիմնական խնդիրները և դրանց հնարավոր լուծումները:

Երկրորդ ենթազուվար նվիրված է ԳԴՀ հայագիտական կենտրոնների և միությունների լուսաբանմանը: Խոսվում է համայնքային, Հայաստանի հետ կապերի և հայ-գերմանական հարաբերությունների սերտացման գործում նրանց դերի և գործունեության մասին: Նախ ներկայացվում է «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի ստեղծման պատմությունը, այնուհետև այժմյան կարգավիճակը: Անդրադառնալով կենտրոնի գործունեությանը՝ քննարկվում են դրանում առկա հիմնախնդիրները և առաջարկվում հնարավոր լուծումներ: Հիշատակվում են այն անձիք, որոնք կենտրոնի գործունեության և Գերմանիայում հայագիտության զարգացման գործում մեծ ավանդ են ունեցել: Առանձին ուսումնասիրման առարկա է դարձել «Լեփսիուսի տունը Պոտսդամում» միությունը: Ներկայացրել ենք տան վերաբացման և վերանորոգման պատմությունը, դրանում ներգրավված քաղաքական և հասարակական գործիչներին: Տեղ են գտել նաև հայկական համայնքի և հայկական կառույցների արձագանքները այդ գործում և առհասարակ վերաբերմունքը տան գործունեությանը: Անդրադարձել ենք նաև Գերմանիայում գործող հայագիտական ամբիոնի աշխատանքներին և դրա խնդիրներին՝ զուգահեռ անցկացնելով Գերմանիայում գործող ադրբեջանական ամբիոնի գործունեության հետ:

Երրորդ ենթազուվար քննական լուսաբանման են ենթարկում գերմանահայ հոգևոր, մշակութային և մասնագիտական կառույցները: Ենթազխի սկզբում նկարագրվում են Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի կառուցվածքը, գործունեությունը և խնդիրները: Անդրադարձ է կատարվել նաև այլ կրոնական ուղղությունների հարող հայերին և համայնքում առկա հայկական կառույցներին: Մշակութային կազմակերպություններից առանձնացրել ենք այն միություններին, որոնք

երկար տարիներ զբաղվում են հայանպաստ գործունեությամբ և համայնքում բավականին հաջողություններ են գրանցել: Խոսվում է նաև մասնագիտական միությունների մասին, որոնք, բացի համայնքում գործունեություն իրականացնելուց, տարբեր ոլորտներում նպաստում են հայրենիք-սփյուռք կապերի ստեղծմանն ու խորացմանը:

Երրորդ գլխում ներկայացվում է Հայոց ցեղասպանության գործընթացը ԳԴՀ-ում: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից յուրաքանչյուրում քննարկվում են Հայոց ցեղասպանության ճանաչմանը միտված քայլերը:

Առաջին ենթագլուխը նվիրված է 1999 թ. ԳԿԽ-ի սկսած գործընթացի քննությանը, որը պետք է համախմբեր հայկական ու հայանպաստ ուժերը՝ ի նպաստ Հայոց ցեղասպանության ճանաչման համատեղ գործելու համար: Այդ գործին մասնակցում էին հայ և այլազգի անհատներ, իսկ համակարգումը վերապահվեց Թեսսա Հոֆմանին, ով ղեկավարում էր «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբը: Նրանք կարողացան համախմբել գրեթե բոլոր շահագրգիռ անձանց և կառույցներին՝ ստանալով հազարավոր ստորագրություններ Բունդեսթագին ներկայացվելիք խնդրագրի համար: Պարզաբանվում են նաև երկրամասային մակարդակով Ցեղասպանության ճանաչման հասնելու փորձերը, որոնք իրականացրել է «Հայկական հարցերի ինստիտուտը» Բավարիայի երկրամասային խորհրդարանում (լանդթագում): Ի հարկե, այս փորձը միանշանակ չընդունվեց «Ճանաչում» աշխատանքային հանձնախումբ կողմից, քանի որ «Հայկական հարցերի ինստիտուտը» գործում էր իրենցից անկախ, սակայն ի վերջո այդ բոլոր շահագրգիռ կառույցների ղեկավար անդամները կարողացան ընդհանուր հայտարարի գալ այդ հարցի շուրջ և միմյանց միջև համագործակցության սկիզբ դնել: Վերջում ներկայացվում են Բունդեսթագի ընդունած որոշումը խնդրագրի վերաբերյալ և շահագրգիռ կառույցների համագործակցության հետագա ճակատագիրը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են Ցեղասպանության մասին Բունդեսթագի քննարկումները և 2005 թ. ընդունած բանաձևը: Սկզբում նկարագրվում են Բունդեսթագում շահագրգիռ պատգամավորների իրականացրած աշխատանքները հարցի քննարկումները Բունդեսթագ մտցնելու գործում, ինչպես նաև հայկական և հայամետ կառույցների ջանքերը այդ խնդրում: Անդրադարձ է կատարվում նաև թուրքական և թուրքամետ կառույցների ու անհատների ձեռնարկումներին: Նկարագրվում են այս ֆոնի վրա գերմանա-թուրքական հարաբերությունների զարգացումները: Ի մի են բերվել դեպքերի վերաբերյալ գերմանական և հայկական մամուլի արձագանքները: Հանգամանալից ներկայացվում են Բունդեսթագի ընդունած բանաձևը և հայկական համայնքի ու կառույցների վերաբերմունքը դրա վերաբերյալ: Այնուհետև նկարագրվում են այդ բանաձևին հաջորդած

գարգացումները, որոնք հիմնականում վերաբերում էին թուրքական կառույցների և անհատների ձեռնարկած հակաքայլերին:

Երրորդ ենթագլխը վերաբերում է 2008-2013թթ. գերմանահայ համայնքի և հայկական հարցով զբաղվող կազմակերպությունների գործունեությանը: Նկարագրվում են Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ ԳԴՀ հայկական համայնքի և այլ կառույցների գործադրած ջանքերը: Այստեղ ուշագրավ են հայկական և այլ կառույցների այն աշխատանքները, որոնք նպատակ ունեին քրեականացնելու Հայոց ցեղասպանության ժխտումը Գերմանիայում: Նրանք առաջարկում էին վերանայել ԳԴՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածը, բացի Հոլոքոստից՝ այն տարածելով նաև այլ ցեղասպանությունների վրա: Այս ժամանակահատվածում ևս աչքի են ընկնում «Ճանաչում» աշխատանքային հանձնախմբի ու նրան անդամակցող անհատների մասնագիտական որակները:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

Ատենախոսությանը կից ներկայացվում է հավելված, որտեղ ի մի են բերված ԳԴՀ վիճակագրական ծառայության տվյալները 1991-2015 թթ. ԳԴՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիություն ունեցող անձանց վերաբերյալ: Հավելվածում տեղ են գտել նաև Թեսսա Հոֆմանի անձնական արխիվից նամակներ, որոնք վերաբերում են ԳԴՀ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին:

Գերմանիայի հայ համայնքի 1991-2013 թթ. գործունեության հետազոտությունը հնարավորություն է ընձեռում կատարելու մի շարք եզրակացություններ.

- Հայոց ներկայությունը Գերմանիայում հիշատակվում է վաղ ժամանակաշրջանից, և դարերի ընթացքում գրանցվել են բազմաթիվ կարևոր ձեռքբերումներ երկկողմ առնչությունների համատեքստում:
- 19-րդ դարից սկսած՝ Գերմանիայում սկսել են գործել հայկական ուսանողական տարբեր խմբեր և միություններ, որոնք հետագայում հիմք դարձան ազգային կազմակերպությունների և համայնքների ստեղծմանը:
- Հայերի մեծ հոսք դեպի Գերմանիա սկսվել է 19-րդ դարի կեսերից հետո: Նրանք գալիս էին Թուրքիայից, Լիբանանից, Իրանից և այլ երկրներից: Այդ ժամանակաշրջանում Գերմանիայի տարբեր հատվածներում հիմնվեցին հայկական համայնքներ, որոնց ներսում էլ՝ տարաբնույթ գործունեություն ծավալող միություններ:
- Հետխորհրդային կարգերի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում գրանցվեցին արտագաղթի բարձր ցուցանիշներ, որի պատճառը հիմնականում հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակն էր: Հաստատվելով տարբեր երկրներում՝ հայերը

ներգրավվում էին այդտեղի գործող հայկական համայնքային կյանքում կամ իրենք էին ձեռնամուխ լինում՝ ստեղծելու միություններ կամ կազմակերպություններ՝ ներգրավելով տեղի հայությանը:

- 1990-ական թթ. սկսած՝ սկսվեց հայերի նոր հոսք դեպի Գերմանիա: Փախստականների հարցերով զբաղվող պետական մարմինները նրանց բնակեցրեցին Գերմանիայի տարբեր երկրամասերում, որտեղ ստեղծեցին հայկական նոր համայնքներ և միություններ:
- Համալրումները հանգեցրեցին համայնքային կյանքի ակտիվացմանը և զարգացմանը: Ստեղծվեցին նոր կազմակերպություններ և միություններ, որոնք գործունեություն էին ծավալում տարբեր բնագավառներում:
- Գերմանիայի հայկական լոբբիստական միություններն իրենց գործունեությամբ ու կարողություններով զիջում են շատ երկրներում գործող նմանատիպ կառույցներին, քանի որ նրանց գործունեության հնարավորությունները և ֆինանսական ներուժը պայմանավորված են հիմնականում համեմատաբար փոքրաթիվ անհատներով, իսկ վերջիններս էլ շատ դեպքերում համագործակցում են միայն այն կազմակերպությունների հետ և այն հարցերի շուրջ, որոնք իրենք են կարևորում:
- Անհրաժեշտ է ստեղծել կառավարման ճիշտ համակարգ և մի մարմին, որը կկարողանա կենտրոնացնել համայնքի ողջ ներուժը՝ հանուն որոշակի միասնական նպատակների:
- Ինչ վերաբերում է համայնքային կյանքում և հայկական հարցերում գերմանացիների ու Գերմանիայում գործող այլ կազմակերպությունների ներգրավմանը, կարելի է փաստել, որ դա տեղի է ունենում ուղղակի և անուղղակի կերպով: Մի դեպքում հայերը ջանքեր են գործադրում հանրության և կառավարության ուշադրությունը իրենց հուզող հարցերի վրա գրավելու համար, իսկ մյուս դեպքում՝ այն տեղի է ունենում համակրանքի կամ ընդհանուր շահի առկայության դեպքում:
- Բազմաթիվ հայեր, բարձրագույն կրթություն ստանալով, հաստատվում են տարբեր համալսարաններում իրենց ներդրումը բերելով մի կողմից բերելով երկրի գիտա-մշակութային կյանքի զարգացմանը, մյուս կողմից համայնքային խնդիրների լուծմանը:
- Հայագիտական կենտրոնները մեծ ներդրում ունեն Գերմանիայում հայագիտության զարգացման գործում: Նրանց հիմնական խնդիրներն են շարունակում մնալ ֆինանսների սակավությունն ու փորձառու մասնագետների պակասը:
- Գերմանիայում գործող Հայ Առաքելական եկեղեցու թեմը հիմնականում կատարում է իր առաքելությունը: Առաջնորդարանի շնորհիվ կազմավորվում են նորանոր հոգևոր-մշակութային միություններ և դա

նպաստում է հայապահպանությանը: Հավատքը Գերմանիայում բնակվող հայերի մեծամասնության համար համախմբող դեր է կատարում:

- Եկեղեցին, իր կոչմանը հավատարիմ, ձեռնպահ է մնում քաղաքական գործընթացներից, քանի որ նրա ակտիվ մասնակցությունը տարբեր կառույցներում ոչ միանշանակ կընդունվեր, ինչն էլ կհանգեցներ անցանկալի շահարկումների:
- Համայնքում գործող մշակութային միությունները հիմնականում կատարում են իրենց վերապահված գործառույթները՝ կազմակերպելով համայնքի հայապահպանությունը և մշակութակրթական կյանքը:
- Իրենց գործունեությամբ առանձնանում են մասնագիտական միությունները, քանի որ դրանք այլ կազմակերպությունների համեմատ ավելի շատ բնագավառներում են համագործակցում Հայաստանի հետ:
- 1999 թ. սկսած՝ Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը ձեռնամուխ եղավ Յեղասպանության ճանաչման գործընթացին՝ այդ նպատակին հասնելու համար օգտագործելով տարբեր կազմակերպությունների և միությունների ներուժը:
- Յեղասպանության ճանաչման գործընթացը Բունդեսթագում և Բավարիայի լանդթագում համակիրներ ունեցավ, սակայն դա բավարար արդյունք չտվեց, ինչը պայմանավորված էր գլխավորապես թուրքական լրբբիի հակազդեցությամբ:
- 2001 թ. խնդրագրի վերջնական մերժումը չհուսահատեցրեց հայանպաստ գործունեություն իրականացնող ուժերին. նրանք կրկին շարունակեցին իրենց առաքելությունը՝ Յեղասպանության ճանաչման գործընթացը վերջնական արդյունքի հասցնելու համար:
- 2004-2007 թթ. կարելի է բնորոշել որպես «Հայոց ցեղասպանության ճանաչման» ենթահամակարգի հասարակական և քաղաքական ընկալման փոխակերպումների ժամանակաշրջան: Ընդ որում, հայկական ուժերին հաջողվեց իրենց վստահողների և օժանդակողների խմբի մեջ ընդգրկել քաղաքական մի շարք հեղինակավոր գործիչների: Խոսքը նախ և առաջ վերաբերում է մի խումբ պատգամավորների, որոնք, ի տարբերություն Յեղասպանության թեմայի շահարկման առաջին փուլի, սկսեցին հետաքրքրություն ցուցաբերել այդ հարցի վերաբերյալ և դրա լուծման եղանակներ փնտրել: Ի վերջո հայկական ուժերին հաջողվեց հասնել այն բանին, որ Բունդեսթագը ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության վերաբերյալ, սակայն առանց «ցեղասպանություն» եզրույթի կիրառման: Տարիներ անց՝ 2016 թ. հունիսի 2-ին, այս ամենը հիմք հանդիսացավ, որ Բունդեսթագը 1915 թ. դեպքերը ճանաչի որպես Յեղասպանություն:
- 2005 թ. նախաձեռնության առանցքային դեմքերից է ՔԴՄ/ՔՍՄ խմբակցության պատգամավոր Բ. Բերգները: Նա՝ որպես «Գերմանիա-

Հարավային Կովկաս» պառլամենտական խմբի նախագահ, մեծ դեր խաղաց, որ Բունդեսթագի պատգամավորները այս հարցը քննարկեն և դրա վերաբերյալ որոշում կայացնեն: Նրան այս հարցում ակտիվորեն օժանդակում էին Ֆրիտց Քուինը («Կանաչներ») և Մարկուս Մեքելը (ՍԴՄ): Հենց այդ համագործակցության շնորհիվ էլ հնարավոր եղավ հասնելու առաջարկի, իսկ հետագայում էլ դրա վերաբերյալ բանաձևի ընդունմանը:

- Այդ առաջարկի բովանդակային մասը կազմելու գործում մեծ դեր ունեցավ նաև «Մեսրոպ» գիտակրթական կենտրոնի ղեկավար Հերման Գուլը: Նա այդ ժամանակ հայանպաստ ամենաազդեցիկ գործիչներից էր, որը նաև բանաձևի տեքստի վերաբերյալ մի շարք խորհուրդներ տվեց Բունդեսթագի խմբակցություններին: Բացի այդ, Գուլին հաջողվեց նաև բացառելու հնարավոր խանգարող գործոնները և կանխել թեմայի շուրջ ծավալվելիք վաղաժամկետ սրացումները:
- Ճանաչման գործընթացի առաջին փուլի հետ համեմատած, երբ ԳԿԽ-ի «հանձնարարությամբ» Թեսսա Հոֆմանին հաջողվեց համախմբել հայամետ ուժերը, երկրորդ փուլի գործընթացներում այդ ուժերը մեկուսացվեցին: Միայն Հակկի Կեսկինի դեմ ստեղծված «միավորման» հետ կապված պետք է նշել, որ ԳԿԽ-ին հաջողվեց, Թորոս Սարյանի նախաձեռնության շնորհիվ, ստեղծել Կեսկինի դեմ ուղղված լուրջ հակազդող մարմին: Բացի այդ, չպետք է նաև անտեսել Բեռլինի «Դեռ Թագեսշպիգել» («Der Tagesspiegel») պարբերականի մի շարք լրագրողների ներդրումը, որոնք ակտիվորեն լուսաբանեցին Կեսկինի անձի շուրջ ծավալված իրադարձությունները և նպաստեցին այդ հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորմանը:
- Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը միշտ կարևոր և առաջնային դեր է գրավել հայկական կազմակերպությունների միջոցառումներում, հատկապես «Գերմանա-հայկական ընկերության» կողմից տպագրվող «Հայ-գերմանական թղթակցությունում»: Յեղասպանության ճանաչման առաջին երկու փորձերից հետո պարզ դարձավ, որ գերմանական քաղաքականությունից «Լեռնային Ղարաբաղի անկախության շարժման օժանդակություն» դեռևս չի կարելի ակնկալել:
- Դեռևս առաջին փուլի ընթացքում Լեռնային Ղարաբաղի օժանդակության հարցի մերժումը երկպառակություններ առաջացրեց Ուլե Հիլչի և Թեսսա Հոֆմանի միջև: Չնայած հայկական շահերի պաշտպանությամբ հանդես եկող կազմակերպությունների կողմից այդ թեմայի երկարատև արծարծմանը՝ գերմանացի քաղաքական գործիչները բացասաբար էին վերաբերվում դրան:
- Երկրորդ փուլի ընթացքում հայկական կոալիցիայի ներսում ի հայտ եկան մի շարք ճեղքվածքներ: Խոսքը վերաբերում է մասնավորապես հայոց

շահերը պաշտպանող արևելագերմանական և արևմտագերմանական գիտնականներին, ովքեր տարբեր տեսլականներ ունեին հայկական հարցի լուծման խնդրում: Արևմտագերմանական գիտնականների թվին են պատկանում Թեսսա Հոֆմանը, Միհրան Դաբաղը, ինչպես նաև Ռաֆֆի Քանդյանը:

- Հայամետ «կրալիցիայի» թուլացման օբյեկտիվ պատճառներից զատ՝ կան նաև սուբյեկտիվ պատճառներ, որոնցից որպես օրինակ կարելի է բերել «Հայկական հարցերի ինստիտուտի» դեպքը, երբ 2004 թ. նրա տնօրեն Էդուարդ Հովհաննիսյանի մահվանից հետո ինստիտուտը թուլացավ և գրեթե դադարեց զբաղվել հայկական շահերի պաշտպանությամբ:
- Դրան հակառակ՝ նկատվեց մի նոր կենտրոնի ակտիվության ավելացում: Խոսքը վերաբերում է Պոտսդամի «Լեփսիոաի տանը», որը ընդլայնեց իրեն օժանդակողների շրջանակը՝ ի հաշիվ քաղաքական մի շարք հայտնի գործիչների և գիտնականների: 2005 թ. ընդունված բանաձևով հենց այդ կենտրոնը դարձավ բանաձևի իրականացմանը նպաստող ամենաազդեցիկ մարմինը:
- Բանաձևը և հայկական շահը պաշտպանելու գործընթացում մեծ դեր խաղաց նաև մամուլը՝ իր անաչառ լուսաբանումներով:
- Բանաձևի ընդունումից հետո իրականացվելիք կետերը մոռացության մատնվեցին, ինչն առաջացրեց համայնքի արդարացի դժգոհությունը:
- Ժամանակի ընթացքում գերմանահայ համայնքը ու դրան կից գործող կառույցները բավարար չափով չհամագործակցեցին իրար հետ, որի հետևանքով հայկական հարցին վերաբերող համակիրների թիվն սկսեց նվազել:
- ԳԿԻՄ-ն վերջին շրջանում կորցրել էր քաղաքական գործընթացների վրա իր ազդեցությունը և շատ դեպքերում հաճախ գերազնահատում էր իր հնարավորությունները: Նրան չհաջողվեց կատարել համախմբող և համակարգող մարմնի դեր, որի հետևանքով հայկական հարցերը առաջ էին քաշվում այլ գործիչների կողմից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Գերմանիայի հայկական համայնքի կազմավորումը և զարգացումը, «Պատմություն և մշակույթ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, 305-310 էջ:
2. Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, թիվ 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 97-102 էջ:

3. ԳԴՀ հայկական համայնքի դերը Հայոց ցեղասպանությունը Բրանդենբուրգի երկրամասի ուսումնական ծրագրում ներառելու համատեքստում, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան «Լիմուշ» հարս., 2016, 137-143 էջ:

МАКИЧЯН ВАРДАН ЛАДИКОВИЧ

АРМЯНСКАЯ ОБЩИНА ГЕРМАНИИ В 1991-2013 ГОДЫ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 27-го июня 2017 г. в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертации представлена армянская община Германии в 1991-2013 гг. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении обоснована необходимость проведения данного исследования, представлена его актуальность, новизна, цели и задачи, источниковедческая база и литература по вопросу.

Первая глава, которая называется “Формирование армянской диаспоры ФРГ и ее современное состояние”, разделена на две подглавы, в первой из которых представлен исторический очерк о присутствии армян в Германии. Здесь представлены история армяно-немецких связей и след армян на немецкой земле. В подглаве говорится также о причинах эмиграции армян в Германию в 20 веке, вплоть до распада СССР.

Во второй подглаве представлены основные особенности армянской диаспоры. В этой части главы обобщены сведения о потоке граждан Республики Армения в Федеративную Республику Германия после 1991 года, говорится о масштабах и причинах этого явления. Материалом послужили данные Национальной статистической службы Германии, которые целиком представлены в приложении. На основе вышеуказанных данных и опросов в различных армянских общинах Германии в подглаве представлены проблемы внутри армянской общины и ее особенности.

Вторая глава диссертации, которая называется “Армянские организации и союзы ФРГ”, состоит из трех подглав. В первой речь идет об армянских, и не только, лоббистских организациях, действующих в Германии. Представлены рамки основной деятельности, структура и эффективность этих организаций.

Во второй подглаве подробным образом представлены арменоведческие центры и союзы, действующие в Германии. Здесь даны исчерпывающие сведения о структуре этих организаций, задачах и проблемах, стоящих перед ними. Убедительным образом обосновывается важность существования арменоведческих центров и союзов, а также указывается на недостаточное к ним внимание. Были проанализированы и эти проблемы и сделана попытка найти их возможное решение.

В третьей подглаве представлены действующие в армянской общине ФРГ духовные, культурные и профессиональные организации. Представлена роль Армянской Апостольской Церкви в жизни общины. Особенно важны те наблюдения, которые касаются деятельности других армянских духовных организаций. Была изучена также работа организаций, осуществляющих культурную деятельность, и их роль в жизни общины. В конце представлена деятельность профессиональных союзов, действующих в общине, и круг проблем, которыми они занимаются.

В третьей главе диссертации, которая называется “Процесс признания Геноцида армян в ФРГ”, представлен процесс признания Геноцида армян в ФРГ, роль армянских организаций в этом процессе. В первой подглаве представлен первый этап признания Геноцида армян в ФРГ. Здесь дается анализ множества первоисточников и исследований по данному вопросу, сделана попытка выявить реальную картину процесса признания Геноцида. Согласно наблюдениям, сделанным в данной подглаве, в процессе признания Геноцида кроме армянских принимают участие и другие организации и частные лица, деятельность которых направлена на то, чтобы процесс был доведен до успешного завершения. В этой подглаве представлены такие фактические материалы, которые ранее не были использованы в других исследованиях.

Вторая подглава посвящена обсуждениям Геноцида армян в Бундестаге ФРГ и резолюции, осуждающей резню армян в Османской империи, которая была принята в 2005 году. Здесь представлены те причины, которые подвигли некоторых членов Бундестага инициировать данный процесс. Представлены также частные лица и организации, которые внесли свой вклад в этот процесс, заложив основу для дальнейшего признания в ФРГ Геноцида армян.

В третьей подглаве представлена деятельность организаций армянской общины ФРГ и других структур, направленная на признание и осуждение Геноцида армян. Представлена деятельность армянских и других организаций, преследующих цель сделать отрицание в ФРГ Геноцида армян уголовно наказуемым преступлением.

Диссертация завершается заключением, в котором обобщены основные результаты исследования.

В приложении обобщены данные Статистической службы ФРГ о гражданах РА, проживающих в ФРГ. В приложение включены также письма из личного архива Тессы Хоффман, которые касаются процесса признания в ФРГ Геноцида армян.

MAKICHYAN VARDAN LADIK

THE ARMENIAN COMMUNITY IN GERMANY FROM 1991 TO 2013

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
“History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on June 27, 2017, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The present PhD thesis dwells upon the Armenian community in Germany from 1991-2013. The PhD thesis consists of Introduction, three chapters, Conclusion, References and Appendix. The topicality, scientific novelty, aims, and objectives, the bases of sources for the research the necessary bibliography related to the object of the thesis are outlined in Introduction.

Chapter One which is entitled “The Formation of the Armenian Community in German Democratic Republic and the Situation in Contemporary Stage” is divided into two subchapters. In the first subchapter of Chapter One historical reference to the Armenian presence in Germany is introduced. The given subchapter also focuses on the study of first connection between the Germans and Armenians, the Armenians’ trace on the German soil. The present subchapter refers to the formation of the first Armenian communities and organizations in Germany as well. The first subchapter of Chapter One also tackles such issues like the motives and chronology of the Armenian migration to Germany in the 20th century including the period of the Soviet Union collapse.

The second subchapter of Chapter One elucidates the main peculiarities of the Armenian Diaspora. The present subchapter summarizes the influx of Armenians into the Federal Republic of Germany since 1991, the dimensions and motives of the Armenian migration are also outlined here. Here the study is based on the data given by the Federal Statistical Office of Germany, which are comprehensively reflected in the Appendix.

The given subchapter dwells upon the main issues and characteristics of the Armenian Diaspora in the Federal Republic of Germany. The analysis of these issues is based on the aforementioned data as well as on the interviews taken from members of various Armenian communities in the Federal Republic of Germany.

Chapter Two of the present PhD thesis is entitled “The Armenian Organizations and Unions in the Federal Republic of Germany and is divided into three subchapters. Within the frames of the first subchapter, the active Armenian organizations and the pro-Armenian lobbies in general are presented. The main scope of activities, the structure and the efficiency of the aforementioned organizations are highlighted.

Within the frames of the second subchapter, the active Armenological centers and unions are thoroughly presented. In this subchapter, comprehensive answers are given concerning the activities of these institutions their tasks and problems. This subchapter touches upon the importance of these centers and unions in a detailed way, and points out the fact that the latter are overlooked. A thorough analysis of these problems is carried out and an attempt is made to find their possible solutions.

The third subchapter of Chapter Two touches upon the spiritual, cultural and professional institutions which function in the Armenian communities of the Federal Republic of Germany. Here the role of the Armenian Apostolic Church in the life of the community is emphasized. The noteworthy observations of the subchapter concern the activities carried out by other Armenian spiritual institutions. The given subchapter also touches upon the cultural institutions in the Federal Republic of Germany, their role in the life of the Armenian community. At the end of the subchapter the activities of existing professional unions are introduced the scope of their tasks and issues is highlighted.

Chapter Three of the PhD thesis is entitled “The Process of the Recognition of the Armenian genocide in the Federal Republic of Germany”. In the present chapter the process of the recognition of the Armenian Genocide is discussed, the role of the community, as well as the impact of other institutions in this process is examined. The first subchapter of Chapter Three focuses on the first stage of the recognition of the Armenian Genocide in the Federal Republic of Germany. Within the frames of the given subchapter, in order to reveal the real picture of the recognition of the Armenian genocide various studies and sources related to the issue are examined. In the subchapter, various observations shed light upon the fact that apart from the Armenian institutions and organizations there exist other bodies and individuals that sought to have success in the recognition of the Armenian genocide. In this subchapter, such factual data concerning the process of recognition are introduced that have never been elucidated in other researchers’ works.

The second subchapter is devoted to the study of the discussions about the Armenian genocide held in 2005, in Bundestag. The given subchapter also focuses on the resolution passed by Bundestag, which condemns the mass killings of the Armenians in the Ottoman Empire. The subchapter highlights all the

motives, which were seen as basic impetus for some MPs to realize the process of recognition. All the individuals and institutions that contributed to the process of recognition are presented. They are seen as key figures that created basis for the further recognition of the Armenian Genocide in the Federal Republic of Germany.

The third subchapter of Chapter 3 highlights the activities of the Armenian community as well the measures taken by other institutions, which were directed towards the recognition of the Armenian Genocide in the Federal Republic of Germany. The given subchapter focuses on the activities carried out by the Armenian organizations as well as by other institutions, which were aimed at criminalizing the denial of the Armenian Genocide in Germany.

The conclusion sums up the main findings of the PhD thesis.

Appendix attached to the thesis sums up the statistic data of the Federal Statistical Office of Germany concerning the individuals who have Armenian citizenship and reside in the Federal Republic of Germany. Appendix also presents the letters taken from Tessa Hofmann's personal archives which refer to the process of the recognition of the Armenian Genocide.